

ՏԻՎԻԹ ԿՈԶՈՒԱԾ ԹԱՓԾՈՒ
ԳՐԶԱԿԱԼ ԿԱՂԱՄԱՐՆԵՐ
ՀԱՅԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ա.

[Տաղ գրչակալ կաղամարի՝ տիվիթի մասին⁽¹⁾]

Դիվիթ⁽²⁾, դու ի՞նչ ես մրոտել,
Մակեար⁽³⁾ քու տէրն ես կարօտել,
Լուս չունիմ, չիմ կարել գրել,
Հեռացիր ինձանից, դիվիթ:

Քեզի հետըս կը կրէի,
Թուրքճայ թէ հայճայ⁽⁴⁾ գրէի,
Ղալամըս քորանար⁽⁵⁾, սրէի,
Հեռացիր ինձանից, դիվիթ:

Վացուն տարի քովս կեցար,
Պեվախիլ⁽⁶⁾ ինձմէ հեռացար,
Դու ինձի ի՞նչպէս մոռացար,
Եստ էղար⁽⁷⁾ ինձանից, դիվիթ:

Քու անունդ ալ էր կաղամպար⁽⁸⁾,
Օգնիչ էիր ինձի համար,

Ինծի էիր շամշ ու դամար⁽⁹⁾,
Եստ էղար ինծանից, դիվիթ:

Ես քու ամակ⁽¹⁰⁾ չեմ մոռանար,
Չուզեցի քեզմէ հեռանալ,
Միտք չէի էնել⁽¹¹⁾ կուրանալ,
Եստ էղար ինծանից, դիվիթ:

Օսքանն էր անուանի նօտար,
Հեռացար ու եղար օտար,
Աստուած աշուրներուս լուս տար,
Գործածէ քիզի, դիվիթ:


Սեղանին մէջ չեմ տենուլ հաց,
Աշխարհն ինծի խաւար մնաց,
Աշուրնուս լուսն որ գնաց,
Բարով մնաս, սիրուն դիվիթ:

Դիվիթս որ թայնայ մտաւ⁽¹²⁾,
Անճոռնին ալ մէյտան գտաւ⁽¹³⁾,
Ինծի պիտի ճերմակ կտաւ⁽¹⁴⁾,
Բարով մնաս, սիրուն դիվիթ:

Տաղիս Հեղինակն է Ոսկան Քէհեայ Պանդաճորձին, որ եղած է երկարակեաց: Հաւանաբար ծնած է 1780-ին: Իր հայ-կաթողիկէ հաւատամքին համար 1827-ին կ'աքսորուի ծննդավայրէն: Թուրքերը կը ձերբակալեն եւ կը կալանաւորեն զայն 1839-ին: Տեսողութիւնը կը տկարանայ իր կեանքի վերջին տարիներուն, որմէ քիչ ետք կը զրկուի բոլորովին: Վերոյիշեալ տաղը գոր այլ տաղերու հետ Մատթէոս Վրդ-Հաճեան հրատարակած է Թիֆլիս՝ 1904-ին՝ կարապի երգն է Ոսկան Քէհեային:


Տիվիթի մասին ձեռքի տակ ունինք գովասանական այլ ձօն մը եւս, որ փորագրուած է գրչակալի մը նեղ նիստերէն մէկուն վրայ: Խառն բարբառային են շարահիւսութիւնն ու լեզուն: Զօնը կը յիշատակէ կաղամարը նաշխող Ղալէմքեար⁽¹⁵⁾ Աւետիսին անունը:

Ազնիւ կաղամար⁽¹⁶⁾
Հուսվածոյ նկար
Եւ վայելչաշար,
Ինծ պարգեւացար



Մեր հարաբանելի վառ ղր

Տիկի կարամբ պարտառ զրկու



Սուրանուղ պառճար⁽¹⁷⁾,
Երեք հարիւր հազար
Եւ քարսուն երքար,
Սորին գրչարար
Աւետիս Ղալէմքեար:

Եւգինէ Մուշեղեանի հաստատումով՝ տաղը փորագրուած է էջմիածինի Թանգարանի թիւ 59/2361 եւ ոսկեջրուած կաղամարին վրայ: Թուականն է 1796, իսկ կաղամարը ձուլող վարպետին անունն է Գէորգ⁽¹⁸⁾:

Բ.

Հայաստանի Պետական Թանգարանն այժմ ունի ոսկեջրած եւ միեւնոյն վարպետի գործ լուկ շորս տիվիթ-կաղամարներ, որոնց հնագոյնը կը կրէ 1794 տարեթիւը: Կու տանք անոր նկարագրութիւնը:

Թիւ 55/2539, Նոր Նախիջեւան, Ռ ՄԽ Գ [1794]. արձանագրութիւն՝ «Ի վայելումն Վարդ պարոնի որդի Պապրիկին, թ. Ռ ՄԽ Գ-ին [1794]. կաղամարին վրայ փակագիր է գրուած վարպետին անունը եւ կը կազմէ Գէորգ⁽¹⁹⁾:

Սկզբնաղբերները այս կաղամարը կը յիշեն տիվիտ, տիվիթ կամ դիվիթ բառերով: Խորհրդի հարաւակողմն ինկող Բարջանճ կամ Փերջենճ գիւղին նուիրուած իր հատորին մէջ⁽²⁰⁾ Մանուկ Մերոնը կը գրէ, թէ տիվիտը «արոյրէ հաստ թիթեղէ ձեռակերտուած՝ կամ ձուլածոյ էր, փորագրութեամբ զարդարուած: Կոթի նման երկայն, տասը մատի չափ գրչակալ մը եւ թանաքակալ գլուխ մը իրարու փակցուած: Գլուխն ու կոթը ունէին խփոցներ⁽²¹⁾, գրիչ, մելան գոց պահելու համար: Գործածուած մելանը սեւ եւ թանձր էր. արարական խէժ եւ կտուածքի ձէթի իս⁽²²⁾ իրար հետ՝ ջրով եփուած. որ գիւղը կը շինուէր:

«Քազա⁽²³⁾ գրուածքներ չորցնելու համար՝ ծծուն թուղթի տեղ կը ցանէին ճերմակ աւազի բարակ փոշի, որ զուրսէն կը գնուէր:

«Տաճիկներու⁽²⁴⁾ գրիչները խամիչէ⁽²⁵⁾ էին: Խոնան⁽²⁶⁾ միայն կրնար խամիչները գրելու յարմար ձեւով տաշել»:

Փոլատեանն իր կարգին կը յայտնէ, թէ «աշակերտները տիվիթը զօտիններուն զարկած, գրքերու եւ տետրակներու կապոցն ալ ձեռքերուն՝ դպրատուն կ'երթային»⁽²⁷⁾:

Ըստ տուեալներու՝ տիպիթն ամբողջական գրչակալն էր. եղէգէ գրիչը կը կոչուէր խալամ⁽²⁸⁾, զոր տաշելու համար խոնան կը գործածէր չախու⁽²⁹⁾ մը:

Այս արեւելեան թանաքամաններու մասին ես ալ ունիմ յուշեր: 1914-1915 թուականներուն դպրոցներուն մէջ տակաւին կը գործածուէր այսօրուան իմաստով այդ տեսի սեքը⁽³⁰⁾, զոր աշակերտները կը կրէին իրենց գօտիին կամ շարվալի⁽³¹⁾ ուշխուրին⁽³²⁾ վրան անցուցած: Խողովակաձեւ կաղամարին ծայրերէն մէկը կը կրէր մելանի փոքրիկ արկղիկը, որ չէր ձգեր որ գօտիէն վար սահէր գրչակալ խողովակը: Մելանը որ ընդհանրապէս սեւ էր՝ կը գնէինք գրավաճառէն հինգ գնդիկը հինգ փարայի: Իւրաքանչիւր գնդիկ որ ունէր երեք սիսեռի մեծութիւն՝ բաւական էր թանաքակալ արկղիկին մէջ գտնուող ծծումբը յապեցնելու: Այս մէկ հատիկ գնդիկով աշակերտ մը կրնար ապահովել իր մելանի պաշարը՝ մէկ շաբաթ գրելու համար: Թանաքը կը պատրաստէինք մելանի կարծր հատիկը նախապէս քարով մը ճգմելով եւ մանրելով եւ ապա քշիկ մը տաք ջուրի մէջ հալեցնելով:

Գրիչ-եղէգը կը գնէինք գրավաճառէն կամ աղդարէն⁽³³⁾, եւ ունէր մօտ կէս սմ. ոլորակ բարակութիւն եւ 40-50 սմ. երկարութիւն: Քիչ թէ շատ խելահաս պատանին կրնար իր գրիչները⁽³⁴⁾ պատրաստել նրբածայր կամ հաստ ծայրամասերով: Բնականաբար ծայրերը քշիկ մը շեղակի կտրուելու էին, որպէսզի ունենային արաբերէն գրելու յարմարութիւն: Կարելի էր տարբեր կտրուածքով մը հայերէն ալ գրել այդ եղէգներով:


Այդ շրջանին մեծ հայրս որ կը գրէր եղէգով՝ ա տառը կը գրէր միացած եւ շեղագիր՝ երեք կէտերով: Եթէ քննէք հայերէն հին նամակ մը՝ պիտի տեսնէք որ անիկա գրուած չէ եւրոպական սրածայր գրչածայրով, այլ՝ եղէգով:

Եղէգնեայ գրիչները կը պատրաստուէին նախ որոշելով անոնց երկարութիւնը ըստ գրչակալի երկարութեան: Ապա խիստ սուր ճգմելով մը⁽³⁵⁾ շեղակի կը կտրուէր եղէգը անոր արմատին տակէն: Շեղակի կտրուած մասը կը կոկուէր դանակով՝ ստանալու համար պահանջուած ձեւը: Հուսկ ուրեմն անոր մէջէն կը հանուէր եղէգնային եւ բուսական մասը:

Որպէսզի գիրերն ըլլային հաստ կամ բարակ՝ եղէգին քթածայրը ուշադրութեամբ կը ճեղքէին՝ մերօրեայ եւրոպական գրիչներու ծայրամասերուն նման:

Եղէգին լաւագոյնն էր սրճագոյնը, որ հաւանաբար կը ներածուէր Հնդկաստանէն:

Թանաքը առաւել կամ նուազ նօսրութեամբ պատրաստելէն ետք՝ գրչակալ երկար խողովակին մէջ կը ներմուծէինք փեռեկ-



Պարզ և ծաղկաւոր գրչամաններ



տուած ու զգզուած մետաքսեայ քծուար մը, որուն վրայ կը թափէինք մելանը որ անմիջապէս կը ծծուէր անկէ: Առ այդ՝ անկարելի էր որ մելանը թափէր կաղամարէն դուրս: Ահա թէ ինչո՞ւ մելանը երբեք չէր թափեր գրչակալներէն, երբ անոնք կախուած կը մնային մեր գօտիներէն: Գրելու համար կը քանայիր գրչակալը եւ անկէ դուրս հանելով նախընտրած եղէգնեայ գրիչը՝ ծայրը կը թաթիւէիր կաղամարի քծուարին, ուրկէ անիկա կը թրջուէր մելանով: Այժմ անիկա պատրաստ էր գրելու համար: Այս գործողութեան համար ժողովուրդը յօրիններ էր գողտրիկ հանելուկ մը, որ, եթէ չի դաւաճաներ յիշողութիւնս, ունէր հետեւեալ կառոյցը.

Ի՞նչ է ՍԱ

Արարի տղուն
Գլուխը կտրեցին,
Սրտիկը հանեցին,
Գինի խմցուցին՝
Ոստիլ սկսաւ:

Պատասխան՝ Եղէգնեայ գրիչ

Այս թափծու գրչակալները զորոնք մեր գօտիներէն անցուցած դպրոց կ'երթայինք՝ երբեմն կը ծառայէին ռազմական գործողութեանց: Թաղային մանկապատանեկան կոիւներու ընթացքին կը կրտրէինք իրարու ճամբաները եւ նոյնհետայն կը սկսէին բախումները. ահաւասիկ այս վերջիններուն ատեն էր որ ի միջի այլոց կը գործածէինք մեր գօտիներէն կախուած գրչամանները: Քանի՛ քանի գլուխ են պատուած այդ գրչակալները եւ քանի՛ անգամ տուն եմ վերադարձեր գլուխս պատուած եւ լսած մօրս անէծքները: Ընդհանրապէս յաղթական կու գային այն խումբերը, որոնց զերազանց էր թիւը տիվիթներուն:

Պէտք է ըսել, որ թափծու այս գրչակալները կը գործածէին միմիայն դպրոցականները, եւ որոնց մեզի ծանօթ հնագոյնը կը կրէ 1794 թուականը: Մե՛նք եւս վերոյիշեալ վարպետէն ունինք գրչակալ մը, որ կը կրէ փակագրեալ ԳԻՈՒԳ անունը: Ունինք նաեւ հնագիտական մեր հաւաքածոյին մէջ անթուակիր՝ այլ փակագրեալ կամ կըրճատեալ անուններով փոքր թիւ մը կաղամարներու, որոնք կը կարծենք թէ կրնան պատկանիլ Գէորգ Վարպետի ժամանակաշրջանին:

Անթեպական թափծու գրչակալներու մեզի ծանօթ հնագոյնը կու գայ 1806 թուականէն, որմէ ետք բոլոր կաղամարները թափծու են այլեւս, եւ կարելի է զանոնք հեշտիւ զանազանիլ իսթամպուլի


կոչուած եւ ոչ-թափծու կաղամարներէն: Մեր ծանօթ բարեկամներուն եւ սուրբական ու լիբանանեան թանգարաններու ազգագրական հաւաքածոներուն մէջ գտնուող հայատառ կամ այլալեզու կնիքներուն ունեցած թուականները չեն անցնիր 1805-1806-էն անդին:

Ամերիկայէն զարեհ Պտուկեանն իր մետաղեայ իրերու ցուցադրութեան ցանկատետրին մէջ կը հրատարակէ թափծու կաղամար մը եւ կը յայտնէ թէ անիկա կը պատկանի գրիշ Անդրէաս Արգարին եւ շինուած է 1666 թուականին՝ առանց սակայն տալու տիվիթը շինող վարպետին անունը: Բայց նման թափծու կաղամարներ գոյութիւն չեն ունեցած 1636 թուականին: Աճառեանի մօտ ալ կը պակսի անունը նման գրիշի մը: Հայաստանի Պետական Թանգարանին պատկանող մէկէ աւելի կաղամարներ կը կրեն 1794-1796 թուականները: Ուրեմն որքան առեն որ տիվիթը շինող վարպետի անուան ընկերակցող 1794 թուականը կանխող տարբեր թուականներու չենք հանդիպիր՝ Հնագոյն թուական կրող կաղամարները մի՛շտ ալ պիտի մնան Երեւանի Պետական Թանգարանի հաւաքածոյին ունեցածները:

Մեր անձնական հաւաքածոն որ կը հաշուէ երեսնեակ մը կաղամարներ եւ որոնց վրայ անհրաժեշտ է աւելցնել հարիւրեակ մը ուրիշներ գորոնք տարիներու ընթացքին գնած եմ բարեկամներու թէ օտարներու համար, ինչպէս նաեւ տասնեակ մը գրչակալներ որոնք կը պատկանին Միմոն Միմոնեանին, Կիրակոս Միսճեանին եւ Վահէ Սէթեանին⁽³⁶⁾ չեն կրեր վերեւ նշուած եւ զայն կանխող թուականներ:

Ի դէպ՝ անհրաժեշտ է հայկական հնութիւններու թերխաշ հաւաքիչներուն զգուշանալ կեղծուած հնութիւններէ: Արդարեւ կը ճանչնամ բազմաթիւ հայեր եւ վարպետներ, որոնք կը պատրաստեն հայերէն արձանագրութիւն կրող այլեւայլ իրեր եւ սուղ գիներով կը վաճառեն անփորձներուն: այդ վարպետները կը ձուլեն եւ կը շինեն կեղծուած դրամներ, զանազան պղնձեայ անօթներ, գրչամաններ եւ սուրբեր՝ պղինձէ, արծաթէ եւ նոյնիսկ ոսկեպատ մետաղէ:

Տիվիթներու մեծագոյն յաճախորդներն են օտարականները, իսկ այսօր շուկայի հնավաճառային ցուցափեղկերուն ցուցադրածները հիններու վրայէն բոլորովին նոր թափուած կաղամարներ են, եւ այդ իսկ պատճառով յստակ կամ անորոշ են անոնց նեղ նիստերուն վրայ հատագրուած թուականները անոնց վարպետներուն կնքադրոշմներուն:



Ծաղկաւոր տիւփքներ



Թափժու իրերու տարածումը Կիլիկիա, Սանճագ, Սուրիա, Լիբանան եւ աւելի հեռուները պատճառ հանդիսացաւ որ հին⁽³⁷⁾ պղինձ հաւաքող հայ մեծ վաճառականներ, որոնք ունին երկրին մերձաւորագոյն եւ հեռաւոր քաղաքները եւ գիւղերը պղինձի համար մաղէ անցընող իրենց գործակալները՝ Անթեպի իրենց պահեստանոցներուն մէջ կ'ամբարէին ձեռք անցուած պղնձեղէնը: Կոտրտուած, ծակծկած, ճզմուած եւ անգործածելի դարձած այս պղինձները մասնաւոր արհեստաւորներ կը հալեցնէին խոշոր քուրաներու մէջ՝ անոնց խառնելով նուազ արժէքաւոր խուրտաններ:

Հրեաները կը նորոգէին հին պղինձները եւ օտարներուն կը վաճառէին որպէս նոր կամ որպէս հնութիւն: Հայերը քիչով չէին գահանար ընդհակառակը՝ կ'արտադրէին մեծաքանակ պղինձ եւ ուրեմն կը շահէին մեծաքանակի առեւտուրէն: Իսկ Թափժուն արտադրելու համար անթեպցիք Հալէպէն կը ներածէին զինգ, անագ եւ կապար, որոնք կ'ընդխառնուէին հալած պղինձին եւ կը յառաջացնէին արոյրախառն եւ դեղնաւուն Թափժու քծուարը:

Անթեպն ունէր պղնձագործութեան աւելի քան վաթսուն գործատեղի՝ զանազան մասնագիտութեամբ: Իւրաքանչիւր գործատեղի ունէր 4-10 գործաւոր, որոնք կը ստանային բարձր վճարում, մանաւանդ վարպետներն⁽³⁸⁾ անոնց:

Անթեպի մէջ պղնձագործական կարելու տուներ էին Արսւլանեաններունը, որոնք բաժնուած էին չորս գերդաստանի.

1. Արսւլանեան Պապայեանց գերդաստանը՝ վաճառական-պղնձագործ:
2. Գառնը Պէօյիւքեանց գերդաստանը՝ վաճառական-պղնձագործ:

3. Զհուտ Արսւլանեանց գերդաստանը:

4. Պապա Շահեանց գերդաստանը:

Յետոյ կարգով կու գային Գնաճեան, Սրապիոնեան, Մաղաբեան, Մանուկեան⁽³⁹⁾ եւ Փաթանեան գերդաստանները: Ասոնցմէ վաճառական-պղնձագործ էր Գնաճեանն ալ:

Իբր վարպետ արհեստաւոր նշանաւոր էին Պարպարա Կարուճը⁽⁴⁰⁾, Սրապիոն Սրապիոնեանը, Ներսէս Մանուկեանը, Ներսէս, Ատուր եւ Յովհաննէս Ասւլանեան⁽⁴¹⁾ եղբայրները, Գէորգ Փաթանեանը, Ներսէս Կիւլէսերեանը եւ ուրիշներ: Սակայն պղնձագործ վարպետներու ամենէն յայտնին էր Մելքոնի⁽⁴²⁾ տղայ Կարապետ Խալֆէն⁽⁴³⁾ որ գալիսէր⁽⁴⁴⁾ պատուանունն էր շահեր իր փորագրութիւններուն եւ կիսաքանդակներուն համար: Իր յաջորդն եղաւ Մել-


Կաղամարներն ունին զանազան չափեր. ոմանք մեծ են, ուրիշներ՝ միջակ, փոքր, նեղ, լայն, եւայլն: Ոմանք պարզ են, մինչ ուրիշներ՝ զարդարուն եւ դրուագուած:

Ընդհանրապէս կը կրեն վարպետին կնքադրոշմը՝ պարզ կամ փակագրեալ, մերթ թուակիր են եւ երբեմն՝ առանց թուականի: Վարպետներուն անունները կրնան գրուած ըլլալ հայերէն, արաբերէն, կամ թիւրքերէն, իսկ թուականներն ընդհանրապէս արաբատառ են: Արհեստակցական առումով՝ այդ վարպետները մեծ մասով անթեպցիներ են եւ մասամբ միայն ուրֆացիներ: Բնական է որ օտարներն ալ, մանաւանդ եգիպտացիները, շինած ըլլան նոյնանման կաղամարներ, սակայն դժուար թէ կարենան մրցիլ հայերուն շինածներուն հետ:


Եթէ գտնուին կաղամարներ որոնց կը պակսի վարպետներուն կնքադրոշմը՝ այդ մէկը յաճախ արդիւնքն է օտար յաճախորդներու պահանջին, որոնք չեն ուզեր որ մրցորդ վաճառական դրացին իմանայ թէ ո՞ւր են պատրաստուած անոնք:

Առեւտրական որպէս՝ Սուրիոյ հրեաներն են որ կարողացած են սեփականացնել հին ու անպէտք պղինձներու առեւտուրը՝ տեղական թէ շրջակայ օտար շուկաներու վրայ: Ի՛նչ որ ալ ըլլայ պարագան՝ հրեայ վաճառականը չի հալեցներ հին պղինձները, այլ վերատեսութեան կ'ենթարկէ զանոնք, կը նորոգէ, մասեր կ'աւելցնէ եւ մէկ զըրչակալի անպէտ ու անգործածելի դարձած մասը կը փոխարինէ այլ անգործածելի գրչակալի մը պիտանի մասով: Եւ այնպիսի վարպետութեամբ մը կը կատարէ ու կը յարդարէ այս բոլորը, որ դժուար թէ գնորդը կարենայ կռահել իր գնած ապրանքին վերանորոգուած ըլլալը:

Յաճախ գնած ենք գրչակալներ, որոնց կաղամարն առնուած է փճացած այլ գրչակալէ, երբ գանոնք շինող վարպետին կնքադրոշմը զետեղուած եղած է գրչակալի խողովակի նիստերուն վրայ. գանոնք գնած ենք լո՛կ այս պատճառով:



Ծաղկաւոր գրչամաններ



Աշակերտներու անունով ծաղկաւոր գրչամաններ

քոն Ուստան, որ ի միջի այլոց շինեց թորիչ մեքենայ մը ճշգրիտ կերպով գտնելու համար օդի բարկութեան աստիճանաչափը: Փոխանակ Տէրզօր աքսորուելու՝ ինչպէս հազարաւորներ՝ աքսորուեցաւ Դամասկոս ձեմալ Փաշայի հրամանով, ուր եւ մեռաւ 1918-ին:

Հոս անհրաժեշտ է խօսիլ պղնձագործ Ներսէս Արսլանեանի մասին, որ տղոցմէ մէկն էր Արսլան-Պապայի: Ժողովուրդը Արսլան-Պապայի տղաքը կը ճանչնար Պապա-Շահի տղաք անունով: Երեք եղբայրներ էին անոնք՝ Ներսէսը, Ատուրը եւ Յովհաննէսը: Ատուրը մեռաւ Հալէպ. 1946-ին Յովհաննէսը ներգաղթեց Հայաստան, ուր եւ մահացաւ յետագային: Ներսէսի գաւակներէն Արեւը քանիցս արժանացաւ յիշատակութեան եւ մրցանակի պղնձեայ, պրոնզեայ եւ արծաթեայ արուեստագիտական իր արտադրութեան համար: Ի՛նքն էր որ պատրաստեց Երուանդ Քոչարի Սասունցի Դաւիթ արձանին պղնձապատումը⁽⁴⁶⁾:


Վերոյիշեալ վարպետներն ի միջի այլոց կը շինէին տիվիթներ, որոնք, սակայն, գործը չէին մէկ մարդու. ընդհակառակը՝ տիվիթի շինութեան գործը ունէր իր մասնագիտական բաժանումները աշխատանքի, մինչ իւրաքանչիւր բաժանում, իր կարգին, ունէր աշխատանքային իր ենթաբաժանումները:

Նախ պղնձագործն ըստ պահանջի կը պատրաստէր իրը: Յետոյ այլեւայլ գործիքներով եւ խարտոցներով կը խարտէր ու կը յղկէր ձուլածոները, ըսենք՝ կաղամարին խողովակները: Մէկ առ մէկ կը յղկուէին գրչատուփի խողովակին երկու կողմերուն խուփերը: Երբորդ՝ գրչակալին անցնելէ ետք՝ վերի խուփը կը ծակուէր մասնաւոր գայլիկոնով մը: Զորբորդ՝ այդ անցքէն կ'անցըուէին գոյգ մը դեղին գամեր եւ խուփը կ'ամրացնէին գրչակալին անոնց գլուխներուն տրուած թեթեւ հարուածներով: Հինգերորդ՝ վերի եւ վարի երկու խուփերը կը զարդարուէին մասնաւոր փորագրիչ-զծագրիչի մը կողմէ, որ գանոնք կը նմանցնէր թագերու: Գործաւոր մը գրչակալի սնամէջ մարմնին մէջ կը մուծէր կապարեայ երկար եւ գրչակալի խորութեամբ ձող մը ու տախտակեայ սալի մը վրայ գետեղելով գայն՝ մուրճի ամուր հարուածներով կը կնքէր գայն քառակուսի եւ մէկ սանթիմետր տրամագիծ ունեցող կնքադրոշմով մը: Երբեմն նոյն կնիքը կը ստանար երկրորդ կողմի նիստն ալ: Այս կնիքը կամ կնիքները կը դրոշմուէին գրչակալին զօղուած թանաքամանին մօտիկը գտնուող նիստերուն ծայրամասերուն վրայ: Եօթներորդ՝ կաղամարին փոքրիկ կափարիչն ունէր զինք փակելու որոշ կերպը, որ շինուած էր երկու փոքր օղակ-

ներէ կամ մասնաւոր փոքր կղպանքէ մը: Ութերորդ՝ կաղամարը կը զօդուէր գրչակալի լայն կողերէն միոյն վրայ: Իններորդ՝ պայման էր որ գրեթէ բոլոր կաղամարներն ալ ունենային իրենց յատուկ զարդագծեր: Տասներորդ՝ բոլոր այս գործողութիւններէն ետք՝ ամբողջացած գրչատուփերը կը տարուէին չարխնըին⁴⁷, որպէսզի մասնաւոր մեքենայով մը յղկէր ու փայլեցնէր զանոնք: Բոլոր այս գործողութիւններէն ետք՝ ի վերջոյ պատրաստ էր տիպիթը շուկայ հանուելու:

Անոնք որոնք կը փափաքէին իրենց զաւկին անունը արձանագրել տալ գրչամանին վրայ՝ կը տանէին զայն գալիմֆեարին, որ ըստ պահանջուած պատճէնի մը՝ կը փորագրէր զայն գրչակալի լայն կողերէն որեւէ մէկուն վրայ: Եթէ հարուստ մէկն էր գրչակալը գնողը՝ զայն զարդարելու եւ նաչխելու գործն ալ կը յանձնէր գալիմֆեարին: Այս գործին ամենէն նշանաւոր ձուլագործներն էին Իչխանեանը, Պանտալեանը, Իսկենեանը եւ Պոչկեզենեանը: Տիպիթագործութեան մեծ զարկ տուաւ Պոչկեզենեան տունէն Ակորճան Ուստան: Նախքան 1840 թուականը զինագործ եւ վարպետ փորագրիչ մըն էր անիկա: Ինքն էր որ Անթեպ բերաւ ջահրակով պղինձ յղկելու կերպը. ի հարկէ՝ իր ջահրակը կը բանէր ձեռքով: Անոր երկու զաւակներէն, որոնք կը կոչուէին Գրիգոր եւ Յովհաննէս՝ առաջինը շարունակեց հօրենական գործը, իսկ Գրիգորին յաջորդեցին իր փեսան՝ Յարութիւն Պարսումեանն ու որդեգիրը՝ Մանուէլ Պաղտասարեանը: Հալէպէն անթեպցի Ռուբէն Պարսումեան որ արուեստագէտ պղնձագործ եւ ձուլող մըն է՝ կը յայտնէ թէ Ակորճան Պոչկեզենեանի որդին Յովհաննէսը զինագործ էր, իսկ Գրիգորին աղջիկը Մարիամը հօրենական մեծ մայրն էր Ռուբէնին:

Ակորճանի առաջին կնիք-դրոշմը կը կրէ Հիճրեթի 1257 թուականը⁽⁴⁸⁾, իսկ տղունը՝ որ հօր անունով դարձեալ կը կոչուի Ակորճանի 1281 թուականը⁽⁴⁹⁾: Ակորճանի թոռնուհին՝ Գրիգորի աղջիկ Մարիամին՝ Գէորգ Պարսումեանին հետ ամուսնութենէն յառաջացան այժմ Հալէպ ապրող Ռուբէն եւ Արթուն Պարսումեան եղբայրները, որոնք վարպետ ձուլագործներ, փորագրիչներ եւ բազմարուեստեաններ են, հայկական հնութեանց գոյգ մը սիրահարներ, որոնց շատ բան կը պարտի պղինձներու անձնական հաւաքածոս: Ի գէպ՝ ինծի համար պղինձ հաւաքող օտար գործակատարներն յաճախ որպէս հայկական կը դնէին երբայերէն արձանագրութիւն կրող կաղամարներ, ու զանոնք կը փորձէին ինծի ներկայացնել որպէս հայկական՝ հայտա մահպարա էրմենիէ, կամ հայտա սահան էրմենիէ⁽⁵⁰⁾ բացատրութեամբ:



Աշակերտների անունները կրող գրչամաններ



Տիվիթը արարական բառ մըն է, որ արական ձեւով կը գրուի տավաթ, կամ իգական ձեւով՝ տավայէ: Անոր տրուած ժողովրդական հոմանիչն է մահպարան, որ հայերէնով կը նշանակէ կաղամար կամ թանաքաման: Սակայն առանձինն առած՝ տավայէն չի նշանակեր գրչատուփ կամ կաղամար, որովհետեւ գրիչները պահող տուփն արաբերէնով կը կոչուի մագլամա, այսինքն այն տուփը ուր կը պահուին գայիմները՝ եղէգնեայ գրիչները: Պարսկերէնով այս տուփը կը կոչուի գալամտան:

Մեր տիվիթ կոչուած կաղամարը յառաջացած է տավաթ կամ տավայէ բառերէն՝ լո՛կ կաղամար կամ թանաքաման նշանակութեամբ: Թիւրքերէն տիվիթը որ կը գրուի արաբատառ տեվաթ ձեւով կը նշանակէ լո՛կ կաղամար, եւ որուն աղաւաղուած ձեւն է տիվիթ կամ տիվիտը: Սակայն հայ եւ ոչ-հայ ժողովուրդին մօտ տիվիթը զգեցած է «կաղամարով միասին խողովակածեւ գրչակալ» իմաստը⁽⁵¹⁾:

է.

Տիվիթներու մեր անձնական՝ ինչպէս նաեւ մեր բարեկամներու հաւաքածոներուն թիւերն են.

Հիճրեթի 1220	1805-1806
Հիճրեթի 1256	1839-1840
Հիճրեթի 1257	1841-1842
Հիճրեթի 1268	1851-1852
Հիճրեթի 1281	1864-1865
Հիճրեթի 1282	1865-1866
Հիճրեթի 1286	1869-1870
Հիճրեթի 1287	1870-1871
Հիճրեթի 1297	1880-1881

Հայաստանի Պետական Թանգարանի կաղամարին նմանող ունինք գրչակալ մը, որ ունի ԳԷՈՐԲ անունը եւ կը կրէ 1794 թուականը: Ունինք նաեւ նոյն շրջանին պատկանող եւ վարպետներու փակագրեալ անուններով չորս տիվիթներ՝ ԱԻԵՏ, ԻՇԽ, ՊՈՂ⁽⁵²⁾ եւ ԿԱՐԱՊԵՏ կնիքներով:



Գրչամաններ — Տիվիթներու վարպետներուն ստորագրութիւնները

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՈՒՑԱԿ ՏԻՎԻԹ-ԿԱՂԱՄԱՐՆԵՐՈՒ

Բիւ	նկարագրութիւն	հաւաքածոյ
1	Զափ՝ 25 ստ.: Վարպետի անուն՝ փակագիր Գէորգ: Գծագր. թիւ 1: Թուական՝ ըստ Հայաստանի Պետական Բանկարանի սկիզբից կազմարին՝ 1794: Մանօր՝ —:	Պերճ Կարապետեանի Պէյրուսի - Սան Տիէկո
2	Զափ՝ 19.5 ստ.: Վարպետի անուն՝ փակագիր ԱԽԵՏ: Գծագր. թիւ 2: Թուական՝ ծառայարարէս 1794: Մանօր՝ —:	Պերճ Կարապետեանի Պէյրուսի - Սան Տիէկո
3	Զափ՝ 20 ստ. պահատուր. պէտք է որ ըլլար 21.5 ստ.: Վարպետի անուն՝ կրճատուած ԻՇԽ: Գծագր. թիւ 3: Թուական՝ ծառայարարէս 1794: Մանօր՝ մարմինը նաշխարարուած՝ զրոյժուածի մեռալին փորա- զրուիմամբ ու կը ներկայացնէ ստիակներով վարդի թուփ ժր: Հաւանարար Արեւելեան Հայաստանի զօրծ: Պահպա- նութիւնը անբարձայի վիճակով: Կազմարին յատակը կոր- սուած:	Պերճ Կարապետեանի Պէյրուսի - Սան Տիէկո
4	Զափ՝ 24 ստ.: Վարպետի անուն՝ կրճատուած ՊՈՂ: Գծագր. թիւ 4: Թուական՝ ծառայարարէս 1794: Մանօր՝ վարպետին կնիքը զրոյժուած է ոչ թէ խողովակին նեղ նիս- տին վրայ՝ այլ, բացառաբար, կազմարի սուսին յատակը: Թափու չէ այս տիվիթը, այլ շինուած է պղնձեայ բարակ թիթեղէ, եւ այդ իսկ պատճառով խիստ թեթեւ է: Դամակոս- ցիները Սթամպուլի ^(ՕՏ) կը կոչեն այսպիսի թեթեւ տիվիթե- րը: Երբ Պոչկեզնեաններու Հնարամտութեամբ անթեպցի- ները ընդօրինակեցին ալ յատկի պոչխական կազմարները՝ իրենց մատչելի զիններով կարողացան գրաւել Սուրիոյ, Պա- ղեստինի եւ Հեռուոր Արապիստանի շուկաները: Այս զօրծը եկամուտի մեծ աղբիւր ժը հանդիսացաւ անթեպցիներուն հա- մար: Հարիւրաւոր պղինձ հաւաքողները, պղինձ հալցնող- ները, մուշղները, յղիողները, զօղողները, փայլեցնողները, նաշխողները, օղնոց աշակերտները, բեռնակիրները, եւ մեծ ու փոքր վաճառականները կ'ապրէին այս զօրծին շնորհիւ:	Պերճ Կարապետեանի Պէյրուսի - Սան Տիէկո
5	Զափ՝ անորոշ: Վարպետի անուն՝ փակագիր ԿԱՐԱՊԵՏ, որ զրոյժուած է մեյանի սու- սին յատակը: Գծագր. թիւ 5: Թուական՝ ծառայարարէս 1794: Մանօր՝ հաւանարար շինուած է երկու կազմարներու միացումով: Անկարելի է գիտնալ թէ ո՞ր շինուած է անրկա:	Պերճ Կարապետեանի Պէյրուսի - Սան Տիէկո

Թիւ	Ակարագրութիւն	հաւաքածոյ
6	Չափ՝ 19.5 սմ. : Վարպետի անուն՝ կրճատուած ԱՐԹՆ ⁽⁵⁴⁾ : Գծագր. թիւ 6 : Թուական՝ անորոշ : Մանօր՝ մէկ ծալքը կորուսած : Գուցէ կիլիկեան գործ :	Պերն Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկո
7	Չափ՝ 21.5 սմ. : Վարպետի անուն՝ կրճատուած ԱՐԹՆ : Գծագր. թիւ 6 : Թուական՝ անորոշ : Մանօր՝ Գուցէ կիլիկեան գործ :	Վահէ Սէթեանի Պէլլրութ - Սան Տիէկո
8	Չափ՝ 25.5 սմ. : Վարպետի անուն՝ փակագիր ՅԱԿՈՒՐ : Գծագր. թիւ 7 : Թուական՝ այլ թուականի կարգին կարելի է կարգաւ նաեւ 1887 : Մանօր՝ թուականը երկզիմի :	Պերն Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկո
9	Չափ՝ 20 սմ. : Վարպետի անուն՝ կրճատուած ՍԱՐ ⁽⁵⁵⁾ : Գծագր. թիւ 8 : Թուական՝ Հիմերթի 1220 ⁽⁵⁶⁾ : Մանօր՝ ——— :	Պերն Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկո
10	Չափ՝ 17 սմ. : Վարպետի անուն՝ կրճատուած ՍԱՐ : Գծագր. թիւ 8 : Թուական՝ Հիմերթի 1220 : Մանօր՝ չաւ :	Վահէ Սէթեանի Պէլլրութ
11	Չափ՝ 21 սմ. : Վարպետի անուն՝ փակագրեալ եւ զարդարեալ երեք վարդեակներով ՅԱԿՈՒՐ : Գծագր. թիւ 9 : Թուական՝ Հիմերթի 1257 ⁽⁵⁷⁾ : Մանօր՝ գրչատուփս ունի իր նիստերէն մէկուն վրան անունը գայն գործածող աշակերտին — ՂԷՊՊԵՃԻ ՍԿՐՏԻՉԻՆ ՈՐԴԻ ՍԱՐԿԻՍ	Պերն Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկո
12	Չափ՝ 26 սմ. : Վարպետի անուն՝ արարատառ թիւրքերէն՝ ԱԿՈՒՐ ՈՒՍԱ : Գծագր. թիւ 10 : Թուական՝ արարատառ կրճատուած Հիմերթի 68 ⁽⁵⁸⁾ : Մանօր՝ մելանին արկղիկը փոխ է անունած Հաւանարար եզիպտոսի գործ գրչատուփէ մը :	Պերն Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկո
13	Չափ՝ 28 սմ. : Վարպետի անուն՝ արարատառ թիւրքերէն՝ ԱԿՈՒՐ ՈՒՍԱ : Գծագր. թիւ 10 : Թուական՝ արարատառ կրճատուած Հիմերթի 68 : Մանօր՝ հաւաքածոյիս ամենէն երկար տիպիքն է : Թէպէտեւ միեւնոյն թուականն ու անունը կը կրէ կնիքը՝ տարբեր է անոր գծազրուցիւնը : Հաւանարար կտարուած կամ կորուսած է նախկին կնիքը եւ անհրաժեշտ է նկատուած նոր մը չի նկատուած :	Պերն Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկո

Թի	Նկարագրություն	համաժողով
14	Զափ՝ 24.5 սմ. : Վարպետի անուն՝ արարատա թիւրքերէն՝ ԱԿՈՒ ՌԻՍՍԱ: Գծագր. թիւ 10: Քուական՝ արարատա կրճատուած Հիւրեթի 68: Մանօր՝ զրշամանին ծայրը պակասուոր: Վարպետին անունը զրոշմուած է երկու անգամ՝ զրշատուփիս երկու նեղ նիստերուն վրայ:	Պերճ Կարապետեանի Պէլլրուժ - Սան Տիէկօ
15	Զափ՝ 20 սմ. : Վարպետի անուն՝ արարատա թիւրքերէն՝ ԱԿՈՒ ՌԻՍՍԱ: Գծագր. թիւ 10: Քուական՝ արարատա կրճատուած Հիւրեթի 68: Մանօր՝ վարպետին անունը զրոշմուած է երկու անգամ՝ զրշատուփիս երկու նեղ նիստերուն վրայ: Պողոզակը զարգարուած է բուսական նաշխերով:	Պերճ Կարապետեանի Պէլլրուժ - Սան Տիէկօ
16	Զափ՝ 23.5 սմ. : Վարպետի անուն՝ արարատա թիւրքերէն՝ ԱԿՈՒ ՌԻՍՍԱ: Գծագր. թիւ 10: Քուական՝ արարատա կրճատուած Հիւրեթի 68: Մանօր՝ կը կրէ երկու կնիք: Գրշատուփս ունի աշակերտին ՎԱՐՊԱՊԵՏԵԱՆ ՄԱՆՈՒԷԼ 1285 ՀՃ. անունն ու թուականը:	Պերճ Կարապետեանի Պէլլրուժ - Սան Տիէկօ
17	Զափ՝ [20.5 սմ.]: Վարպետի անուն՝ արարատա թիւրքերէն՝ ԱԿՈՒ ՌԻՍՍԱ: Գծագր. թիւ 10: Քուական՝ արարատա կրճատուած Հիւրեթի 68: Մանօր՝ կնիքն երկու անգամ զրոշմուած է երկու նիստերուն վրայ: Գրշատուփս ունի աշակերտին ՔԵՇԻՇԵԱՆ ԱՐԱՄ անունը:	Պերճ Կարապետեանի Պէլլրուժ - Սան Տիէկօ
18	Զափ՝ 23 սմ. : Վարպետի անուն՝ արարատա թիւրքերէն՝ ԱԿՈՒ ՌԻՍՍԱ: Գծագր. թիւ 10: Քուական՝ արարատա կրճատուած Հիւրեթի 68: Մանօր՝ կնիքն երկու անգամ զրոշմուած է երկու նիստերուն վրայ: Պէլլրուժի վերին զէպերուն՝ Հնազխտական այլ նիւթերու Հետ այս տիպիին այլ տրուեցաւ սուտի:	Վահէ Սէթեանի Պէլլրուժ
19	Զափ՝ [չէ տրուած] : Վարպետի անուն՝ արարատա թիւրքերէն՝ ԱԿՈՒ ՌԻՍՍԱ: Գծագր. թիւ 10: Քուական՝ արարատա կրճատուած Հիւրեթի 68: Մանօր՝ սաննդի:	Կիրակոս Միսնեանի Պէլլրուժ Պէլլրուժ
20	Զափ՝ 23 սմ. : Վարպետի անուն՝ փակագիր ՅԱԿՈՒ: Գծագր. թիւ 11: Քուական՝ Հիւրեթի 1281: Մանօր՝ կնիքը զրոշմուած է երկու անգամ: Կիւտյն կողմին վրայ կայ երբայիւրէն արձանագրութիւն ճը:	Պերճ Կարապետեանի Պէլլրուժ - Սան Տիէկօ

թիւ	Սկարագրութիւն	Խաւաքաւան
21	Զափ՝ 22 սձ. : Վարպետի անուն՝ փակագիր ՅԱԿՈՒԲ: Գծագր. թիւ 11 ⁽⁶⁰⁾ : Թուական՝ Հիւնրեթի 1281 ⁽⁵⁹⁾ : Մանօր՝ կնիքը զրոյշուած է երկու անգամ :	Պերճ Կարապետեանի Պէշրութ - Սան Տիէկօ
22	Զափ՝ 13 սձ. : Վարպետի անուն՝ փակագրեալ ՅԱԿՈՒԲ: Գծագր. թիւ 12 : Թուական՝ Հիւնրեթի 1281 : Մանօր՝ զրչափայի խողովակի մաս մըն է միայն այս տիվիթը եւ ունի միայն 13 սձ. երկարութիւն, որուն վրան զրոյշուած են վարպետին կնիքն ու Հիւնրեթի թուականը : Կնիքը բլիկ մը տարրեր է յիշուած Յակոբներու կնիքներէն : Հաւանաբար տարրեր Յակոբ մըն է վարպետը : Հարց է թէ ինչո՞ւ : Համար ձուլագործներուն մեծամասնութիւնը կը կրէ Յակոբ անունը : Արդեօք չի կնիքները կտարուած կամ մաշած ըլլալուն համար երբեք՞ չեն փոխարինուած : Տիվիթի մասնակի այս խողովակը նուէր եմ ստացեր 1970-ին Հայկարեան անթեպցի ձուլագործ Արթուր Պարունեանէն :	Պերճ Կարապետեանի Պէշրութ - Սան Տիէկօ
23	Զափ՝ 22 սձ. : Վարպետի անուն՝ փակագիր ՍԱՐԳԻՍ: Գծագր. թիւ 13 : Թուական՝ Հիւնրեթի [12]81 ⁽⁶¹⁾ : Մանօր՝ կնիքն օգտագործուած է երկու անգամ. թերի է երկարութիւնը, որ պէտք է որ ըլլայ 23.5 սձ. :	Պերճ Կարապետեանի Պէշրութ - Սան Տիէկօ
24	Զափ՝ 22.5 սձ. : Վարպետի անուն՝ արարատառ ՈՒՍՏԱ ԱՏՈՒԲ: Գծագր. թիւ 14 : Թուական՝ Հիւնրեթի 1282 ⁽⁶²⁾ : Մանօր՝ կնիքն օգտագործուած է երկու անգամ :	Պերճ Կարապետեանի Պէշրութ - Սան Տիէկօ
25	Զափ՝ 26 սձ. : Վարպետի անուն՝ կէս մը փակագրեալ ԱՏՈՒԲ: Գծագր. թիւ 15 : Թուական՝ Հիւնրեթի 1286 ⁽⁶³⁾ : Մանօր՝ ունի սեփականատէր աշակերտին անունը՝ ԱՊՏՈՒԼ-ՃԱՎԱԲ ՄՈՒՍԱԼԼԱՅԻ ՉԱՔ, ՀՃ. 1286 : Մանօր՝ սեփականատիրոջ անունն արձանագրուած է արարեղծեմ է կը եղանակէ Ապտուլ-Ճավառ Մուսալլայի որդի, ՀՃ. 1286 :	Պերճ Կարապետեանի Պէշրութ - Սան Տիէկօ
26	Զափ՝ 26 սձ. : Վարպետի անուն՝ Հայերէն փակագրեալ ԱՏՈՒԲ: Գծագր. թիւ 16 : Թուական՝ կրճատուած Հիւնրեթի 97 եւ արեւմտեան [18]80 ⁽⁶⁴⁾ : Մանօր՝ տակա միւս Ատուրէն տարրեր մէկն է : Մագաւոր է տիվիթին խողովակը :	Պերճ Կարապետեանի Պէշրութ - Սան Տիէկօ
27	Զափ՝ 22 սձ. : Վարպետի անուն՝ Հայերէն փակագրեալ ԱՏՈՒԲ: Գծագր. թիւ 16 :	Պերճ Կարապետեանի Պէշրութ -

ԲԻ	նկարագրութիւն	հաւաքածոյ
	Քուական՝ կրճատուած Հիմերթի 97 եւ արեւմտեան [18]80: Մանօր՝ ծաղկաւոր են կողերը, իսկ ծայրամասերն ունին պոչիկներ:	Սան Տիէկօ
28	Զափ՝ 23.5 սմ.: Վարպետի անուն՝ Հայերէն փակագիր ԱՏՈՒՐ: Գծագր. թիւ 16: Քուական՝ կրճատուած Հիմերթի 97 եւ արեւմտեան [18]80: Մանօր՝ ծաղկաւոր:	Պերճ Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկօ
29	Զափ՝ 24 սմ.: Վարպետի անուն՝ Հայերէն փակագիր ԱՏՈՒՐ: Գծագր. թիւ 16: Քուական՝ կրճատուած Հիմերթի 97 եւ արեւմտեան [18]80: Մանօր՝ խիստ լաւ պահպանուած եւ զարդարուն	Կիրակոս Միսնեանի Պէլլրութ
30	Զափ՝ 22 սմ.: Վարպետի անուն՝ Հայերէն փակագիր ԱՏՈՒՐ: Գծագր. թիւ 16: Քուական՝ կրճատուած Հիմերթի 97 եւ արեւմտեան [18]80: Մանօր՝ վարպետին անունը զրոյժուած է երկու անգամ:	Կիրակոս Միսնեանի Պէլլրութ
31	Զափ՝ թերի: Վարպետի անուն՝ Հայերէն փակագիր ԱՏՈՒՐ: Գծագր. թիւ 16: Քուական՝ կրճատուած Հիմերթի 97 եւ արեւմտեան [18]80: Մանօր՝ չափը անստորջ է, որովհետեւ կորսուած է մէկ ծայրը տի- վիթին:	Պերճ Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկօ
32	Զափ՝ 24 սմ.: Վարպետի անուն՝ Հատագրեալ ԲէջԱՆ: Գծագր. թիւ 17: Քուական՝ կրճատուած Հիմերթի 86 ⁽⁶⁶⁾ : Մանօր՝ վարպետին անունը զրոյժուած է երկու անգամ:	Պերճ Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկօ
33	Զափ՝ 25-25 սմ.: Վարպետի անուն՝ Հատագրեալ ԲէջԱՆ: Գծագր. թիւ 17: Քուական՝ կրճատուած Հիմերթի 86: Մանօր՝ թաշտուած՝ չիբանսեան վերջին զէպերուն:	Վահէ Ալթինանի Պէլլրութ
34	Զափ՝ 19 սմ.: Վարպետի անուն՝ ՅԱԿՈՒՐ: Գծագր. թիւ 18: Քուական՝ մատուցողութիւն 1890-1915: Մանօր՝ շինուած Ուրֆույի մէջ:	Պերճ Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկօ
35	Զափ՝ 22.5 սմ.: Վարպետի անուն՝ ՅԱԿՈՒՐ: Գծագր. թիւ 18: Քուական՝ անյայտ: Մանօր՝ չափը թերի է- պէտք է որ ըլլայ 24 սմ.: Նաշիերը աւել- ցուած են յետագային:	Պերճ Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկօ
36	Զափ՝ 21 սմ.: Վարպետի անուն՝ չէ արձանագրուած: Քուական՝ Հիմերթի 1281 ⁽⁶⁶⁾ : Մանօր՝ արձանագրուած է աշակերտին անունը՝ ՊԱԼԵԱՆ ԱՎԵ-	Պերճ Կարապետեանի Պէլլրութ - Սան Տիէկօ

թիւ	Գկարագրութիւն	հաւաքածոյ
-----	---------------	-----------

ՏԻՍԻ ՈՐՊԻՆ ԳԸՐԻԳՈՐ (ՀՃ. 1281): Այս թուականին
կային յայտնի երկու պղնձագործներ՝ Յակոբ եւ Սարգիս:

ՅԱՆԵԼՈՒԱՆ

- | | | |
|----|---|---|
| 37 | Զափ՝ 25-5 սմ.:
Վարպետի անուն՝ փակագիր ՅԱԿՈՐ: Գծագր. թիւ 11:
Թուական Հիմքերի 1281:
Մանօր՝ յաւաքածուած: | Կիրակոս Մանեանի
Պէլլուր |
| 38 | Զափ՝ 22 սմ.:
Վարպետի անուն՝ արարատաւ՝ ԱԿՈՐ ՈՒՍԱ: Գծագր. թիւ 10:
Թուական՝ անգոյ:
Մանօր՝ չափը թերի է՝ արժիթին ծայրը կորսուած ըլլալուն պատ-
ճառաւ: Անունը գրուած է երկու անգամ: | Կիրակոս Մանեանի
Պէլլուր |
| 39 | Զափ՝ 24-5 սմ.:
Վարպետի անուն՝ ՅԱԿՈՐ:
Թուական՝ Հիմքերի 1257:
Մանօր՝ կեիքը զարգարուած է վարդակներով: | Կիրակոս Մանեանի
Պէլլուր |
| 40 | Զափ՝ 26 սմ.:
Վարպետի անուն՝ փակագիր ՅԱԿՈՐ: Գծագր. թիւ 19:
Թուական՝ Հիմքերի կրճատուած 87 ⁽⁸⁷⁾ :
Մանօր՝ յաւաքածուած: Թուականը արարատաւ է: | Պերճ Կարապետեանի
Պէլլուր -
Սան Տիկի |
| 41 | Զափ՝ 24 սմ.:
Վարպետի անուն՝ փակագիր ՅԱԿՈՐ: Գծագր. թիւ 19:
Թուական՝ Հիմքերի կրճատուած 87:
Մանօր՝ թանաքամակին յուսիքը պակաս անով՝ չափը դիտի ըլլալը 26
սմ.: Պէլլուրի վերջին զեպերուն՝ թալանուած: | Վահէ Սէթեանի
Պէլլուր |

Պ. Մ. Կ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Յարութիւն Վրդ. Լույունեանց եւ Մառտէոս Վրդ. Լանեան, *Յուշամատենան Յոսորջուրի*, Վիեննա, 1964, էջ 193-225:
2. Գրչատուփ-կաղամար:
3. Թէ ոչ:
4. Թիրփերէն կամ հայերէն:
5. Գրիչս փրանար:
6. Յանկարծ:
7. Օտարացար:
8. Կաղամար:
9. Արեւ ու յուսին:
10. Վաստակ, աշխատանք:
11. Չէի մտածեր, չէի խորհիր:
12. Կորուսեցաւ, առանձին մնաց:
13. Լրագարակ ելաւ:
14. Պատանք:
15. Մետաղի վրայ փորագրիչ-նաշխող:
16. Տողերուն հատածունը իմս է:
17. Գուցէ՛ սրբանօր պայծառ:
18. Եւզիմէ Մուշեղեան, *Լայերէն Արձանագրութեամբ Առարկաներ*, Երեւան, 1964, էջ 76-77:
19. Նոյն, էջ 75:
20. Մանուկ Մերոն, *Բարջանն Գիւղ*, Պոստոն, 1938:
21. Կափարիչներ:
22. Այրող մարտի բոցէն արտադրուող մուր:
23. Նոր, բարձ՝ հոս՝ բաց:
24. Ըսել կ'ուզէ՛ բուրփերու:
25. Եղէզէ:
26. Ուսուցիչը:
27. Անգրաճիկ Փոլատեան, «Անջրդի գիւղ», *Պատմութիւն Լայոց Առարկիրի*, Նիւ Եորք, 1960, էջ 91:
28. Արարերէն *զալէ՛մ*, որ աղաւաղուելով՝ թիրփերէնի մէջ վերածուած է *խալամի*: Գրիչ:
29. Մուր ու փոքր շեղրով գրպանի դանակ:
30. Գրանդանի ուսանողական գրեմական կազմած:
31. Արեւելեան յայն ու պոչաւոր տափատ:
32. *Շարվալը* մէջէն ամրացուած պահելու համար օգտագործուող ֆաշ, որ անցուած է *չարվալի* վերի ծայրամասին խողովակածու: անցիկն:
33. *Աղղար* կամ *սթթար*: Փերեզակ, մանրավաճառ:
34. Այսինքն՝ *զամիչները*: Եղէզնեայ գրիչները:
35. Լոս գնելիին հետ կը տրուի նաեւ *չախու* բառը:
36. Լիբանանեան ղէպփերու ընթացքին ամրոջուրեամբ արարի տրուեցան Վանէ Սէրեանի ունեցած Լայկական հին դրամներու, պղնձեայ հնուութիւններու, հին գորգերու, հնատիպ գիրքերու եւ մամուլի սեանչիլի հաւաքածոները:
37. Լոս հինին հետ կը տրուի նաեւ *խուրտա* բառը, որ կը նշանակէ բեկոր, փշրանք, հին առարկայ, եւ անգործածելի ապրանք:
38. Լոս օգտագործուած է բրփերէն *ուստա* բառը, որ կը նշանակէ հմուտ, վարդապետ եւ ուսուցիչ:
39. Մանօր էր նաեւ Կեալուր Մանիկ անուկով:
40. Սղուած եւ աղաւաղուած ձեւն է Կարապետին:
41. Մանօր էին նաեւ Պապաշահ Եղբայրներ յորջորջումով:

42. Մանօր է Գալայնը Մելոնն անունով:
43. Արհեստի մէջ աւագ գործաւոր: Հոս կը նշանակէ վարպետ: Ուստայէն մէկ աստիճան վար եղող վարպետ գործաւոր:
44. Մետաղի վրայ փորագրիչ եւ նաշխող:
45. Այս բոլորին մասին մանրամասն տես՝ Գեորգ Ա. Սարաֆեան, *Պատմութիւն Անթեպի Հայոց*, հտ. Բ., Լոս Անճելըս, 1953, էջ 278-281:
46. *Հայ Անթեպ*, 1965, էջ 49: Տես նաեւ՝ Գրիգոր Պողարեան, *Այնթապականք*, հտ. Ա., *Այնթապցիներու Տուրքը Տպադրութեան, Հայ Մամուլին, Հայ Գրականութեան եւ Հայ Մշակոյթին*, Պէյրուս, 1974, էջ 151:
47. Ճախտարականման մեքենայով մետաղեայ իրերը յղկող եւ փայլեցնող մասնագետ:
48. 1841-1842:
49. 1864-1865:
50. *Այս Հայկական թանգարտան է կամ այս Հայկական պնակ է:*
51. Մանրամասն տես՝ «Dawat, plumier de bronze gravé», *Encyclopédie de l'Islam; Supplément*, Leiden, 1981, p. 203-204:
52. Աւետիս, Իշխան, Պողոս:
53. Այսինքն՝ Պոլսական արտադրութիւն:
54. Արբուն: Գուցէ եւ Արբի՞ն: Յարութի՞ւն:
55. Սարգիս:
56. 1805-1806:
57. 1841-1842:
58. Հինրեթի [12]68 = 1851-1852:
59. 1864-1865:
60. Գծագրութիւն թիւ 11 կնիքին նմանահանութիւնը կապարի վրայ մեզի համար պատրաստեց Հայկէն Արբուն Պարսումեանը: Իսկականը կը գտնուի Պարսումեանին մօտ:
61. 1864-1865:
62. 1865-1866:
63. 1869-1870:
64. Հինրեթի [12]97 = 1879-1880:
65. Հինրեթի [12]86 = 1869-1870:
66. 1864-1865:
67. Հինրեթի [12]87 = 1870-1871:

THE MOULDED *DIVIDS*
AND
THEIR ARMENIAN INSCRIPTIONS
(Summary)

BERJ GARABEDIAN

One of the last studies of the late Berj M. Garabedian, the article presents the study of a rare item which was a novelty in the educational system of the Armenian Antep, Cilicia, in the second half of the nineteenth century. Garabedian does minutely study the moulding of the various component parts of the *divid*, its decorative engravings, the sundry Armenian inscriptions, the different seals of the master moulders and workers in bronze and copper, and the question of dates and names in monogramic forms. Moreover, Garabedian gives the etymology of the term *divid* and makes it sure that a *divid* was not just a simple student inkpot, but rather a combination of an inkpot, an elongated penray and a pen of reed. The study ends with a minute description of some forty *divids* from Garabedian's personal collection of Armenian copper and bronze, as well as from those of Vahé Setian and Giragos Mekhjian of Beirut.